ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Արամուս, (0222) 6-01-57, (0222) 6-44-10

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 հուլիսի 2021 թվականի N 41

## *ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 23-Ի ԹԻՎ 12 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 17-րդ հոդվածի պահանջներով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

Հաստատել համայնքի ավագանու 2021 թվականի հուլիսի 23-ի թիվ 12 արտահերթ նիստի օրակարգը.

1. Համայնքի ավագանու 2020 թվականի մարտի 5-ի N 18 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին.
2. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ու շինությունը օտարելու մասին.
3. Արամուս համայնքի տարածքում գտնվող, սակայն որպես «անհայտ» քաղաքացու սեփականություն հաշվառված հողամասերը համայնքի սեփականություն ճանաչելու մասին.
4. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամաս ուղղակի վաճառքով օտարելու մասին.
5. Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասրն աճուրդային կարգով օտարելու մասին.
6. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ - 6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԶԱՔԱՐԻԱ
2. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՎԱՀՐԱՄ
3. ՓԻԼԻՊՈՍՅԱՆ ՎԱՀԱՆ
4. ՍՏԵՓԱՆՅԱՆ ՄԵՆՈՒԱ
5. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ԳԵՂԱՄ
6, ՂԱՐԱԽԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ ՀՐԱՉՅԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Արամուս, (0222) 6-01-57, (0222) 6-44-10


## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 հուլիսի 2021 թվականի N 42

## *ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 5-Ի N 18 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով "Նորմատիվ իրավական ակտերի մասին" օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Ուժը կորցրած ճանաչել Արամուս համայնքի ղեկավարի 2020 թվականի մարտի 5-ի «Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ու շինությունը օտարելու մասին» N 18 որոշումը։

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից։

Կողմ - 6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԶԱՔԱՐԻԱ
2. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՎԱՀՐԱՄ
3. ՓԻԼԻՊՊՈՍՅԱՆ ՎԱՀԱՆ
4. ՍՏԵՓԱՆՅԱՆ ՄԵՆՈՒԱ
5. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ԳԵՂԱՄ
6. ՂԱՐԱԽԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ՀՐԱՉՅԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՀՎՀՀ 03502169

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Արամուս, (0222) 6-01-57, (0222) 6-44-10

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 հուլիսի 2021 թվականի N 43

## *ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍ ՈՒ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ գլխի պահանջներով՝ *համայնքի ավագանին որոշում է.*

1. Թույլատրել համայնքի ղեկավարին՝ ուղղակի վաճառքով օտարել համայնքային սեփականություն հանդիսացող, Արամուս համայնքի Տիգրանաձորի խճուղի 4/6/1 հասցեում գտնվող (սեփականության վկայական N 19022020-07-0108), 07-013-0136-0080 կադաստրային ծածկագրով 0,009016հա բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողամասը և նրա վրա գտնվող 71.74մ² (արտաքին մակերես՝ 84.81մ²) մակերեսով հասարակական նշանակության շինությունները՝ կառուցապատող Ռուբեն Մանվելի Թևոսյանին:

2. Արամուս համայնքի Տիգրանաձորի խճուղի 4/1/6 հասցեում գտնվող հողամասը և շինությունը օտարել ինքնակամ կառույցն իրականացնող Ռուբեն Մանվելի Թևոսյանին ՝ 1537368 (մեկ միլիոն հինգ հարյուր երեսունյոթ հազար երեք հարյուր վաթսունութ) դրամ գնով, որից՝ հողամասի համար՝ 260383 (երկու հարյուր վաթսուն հազար երեք հարյուր ութսուներեք) դրամ, շինությունների համար՝ 1276985 (մեկ միլիոն երկու հարյուր յոթանասունվեց հազար ինը հարյուր ութսունհինգ) դրամ:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ - 6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԶԱՔԱՐԻԱ
2. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՎԱՀՐԱՄ
3. ՓԻԼԻՊՈՍՅԱՆ ՎԱՀԱՆ
4. ՍՏԵՓԱՆՅԱՆ ՄԵՆՈՒԱ
5. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ԳԵՂԱՄ
6. ՂԱՐԱԽԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ՀՐԱՉՅԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎՃԵՌՆՏՈՒ ՀՀ*03502169*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Արամուս, (0222) 6-01-57, (0222) 6-44-10

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 հուլիսի 2021 թվականի N 44

## *ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՍԱԿԱՅՆ ՈՐՊԵՍ «ԱՆՀԱՅՏ» ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՇՎԱՌՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 2010 թվականի հունիսի 01-ի թիվ 186-Ն հրամանի 9-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջներով *համայնքի ավագանին որոշում է.*

1. Արամուս համայնքի տարածքում գտնվող, սակայն «անհայտ» քաղաքացու սեփականություն հաշվառված 07-013-0156-0026 կադաստրային ծածկագրով 0.01881 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասը ճանաչել որպես Արամուս համայնքի սեփականություն:

2. Արամուս համայնքի տարածքում գտնվող, սակայն «անհայտ» քաղաքացու սեփականություն հաշվառված 07-013-0016-ից կադաստրային ծածկագրից 0.00279 հա մակերեսով բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը ճանաչել որպես Արամուս համայնքի սեփականություն:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**Կողմ - 6** **Դեմ -0** **Ձեռնպահ -0**

1. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԶԱՔԱՐԻԱ
2. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՎԱՀՐԱՄ
3. ՓԻԼԻՊՈՍՅԱՆ ՎԱՀԱՆ
4. ՍՏԵՓԱՆՅԱՆ ՄԵՆՈՒԱ
5. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ԳԵՂԱՄ
6. ՂԱՐԱԽԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ՀՐԱՉՅԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Արամուս, (0222) 6-01-57, (0222) 6-44-10

## Ո Ր Ո Շ Ու Մ

23 հուլիսի 2021 թվականի N 45

## *ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հավանություն տալով Արմինե Արամայիսի Սմբաթյանի դիմումին՝ ուղղակի վաճառքով Արմինե Սմբաթյանին 1000000 /մեկ միլիոն/ դրամ արժեքով օտարել Արամուս համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 07-013-0101-0098 կադաստրային ծածկագրով 0,28955հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը:
2. Արամուս համայնքի վարչական տարածքում գտնվող 07-013-0101-0098 կադաստրային ծածկագրով 0,28955հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը օտարվում է Արմինե Արամայիսի Սմբաթյանին՝ իրեն սեփականության իրավունքով պատկանող 07-013-0101-0204 կադաստրային ծածկագրով 1,238828հա (վկայական N 21062021-07-0098) գյուղատնտեսական նշանակության հողմասը ընդլայնելու և օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:
3. Վերը նշված հողամասը օտարվում է ուղղակի վաճառքով, քանի որ նշված հողամասն անհնար է որպես առանձին միավոր աճուրդային կարգով օտարել Արամուս համայնքում սեփականաշնորհված հողաբաժնի չափից փոքր լինելու պատճառով, ինչպես նաև օտարվող հողամասի մուտքը հնարավոր է միայն 07-013-0101-0204 կադաստրային ծածկագրով հողամասի միջոցով:
4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԶԱՔԱՐԻԱ
2. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՎԱՀՐԱՄ
3. ՓԻԼԻՊՈՍՅԱՆ ՎԱՀԱՆ
4. ՍՏԵՓԱՆՅԱՆ ՄԵՆՈՒԱ
5. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ԳԵՂԱՄ
6. ՂԱՐԱԽԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ՀՐԱՉՅԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Արամուս, (0222) 6-01-57, (0222) 6-44-10

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 հուլիսի 2021 թվականի N 46

## *ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով՝ *համայնքի ավագանին որոշում է.*

1. Հաստատել հողամասերի օտարման սխեմաները (համաձայն հավելվածների)՝ համաձայն որոնց թույլատրել համայնքի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարին 2021 թվականին աճուրդ-վաճառքի միջոցով օտարել պետական սեփականություն հանդիսացող 0,015 հա բնակավայրերի նշանակության հասրակական կառուցապատման հողամաս, 1.970369 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսք և համայնքային սեփականություն հանդիսացող 0,2 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսք:

2. Արամուս համայնքի Տիգրանաձորի խճուղի 4/5 հասցեում գտնվող, պետական սեփականություն հանդիսացող, օտարման ենթակա՝ 07-013-0136-0041 կադաստրային ծածկագրով 0,015 հա բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողամասի համար մեկնարկային գին սահմանել՝ 4000000 (չորս միլիոն) դրամ:

3. Արամուս համայնքի վարչական տարածքում գտնվող, պետական սեփականություն հանդիսացող, օտարման ենթակա՝ 07-013-0136-ից (համաձայն հատակագծի) կադաստրային ծածկագրից 1,770369 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքի համար մեկնարկային գին սահմանել՝ 2500000 (երկու միլիոն հինգ հարյուր հազար) դրամ:

4. Արամուս համայնքի վարչական տարածքում գտնվող, պետական սեփականություն հանդիսացող, օտարման ենթակա՝ 07-013-0136-ից (համաձայն հատակագծի) կադաստրային ծածկագրից 0,2 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքի համար մեկնարկային գին սահմանել՝ 300000 (երեք հարյուր հազար) դրամ:

5. Արամուս համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, օտարման ենթակա՝ 07-013-0137-0029 կադաստրային ծածկագրից 0,2 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքի համար մեկնարկային գին սահմանել՝ 300000 (երեք հարյուր հազար) դրամ:

6. Բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողամասը տրամադրվում է կառուցապատման նպատակով, իսկ գյուղատնտեսական նշանակության հողամասերը՝ գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով:

7. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ - 6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԶԱՔԱՐԻԱ
2. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՎԱՀՐԱՄ
3. ՓԻԼԻՊՈՍՅԱՆ ՎԱՀԱՆ
4. ՍՏԵՓԱՆՅԱՆ ՄԵՆՈՒԱ
5. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ԳԵՂԱՄ
6, ՂԱՐԱԽԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ ՀՐԱՉՅԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔ ՀՀ*03502169*